C. E. P. F. A.

ՖՐՄՈՒԿՅԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ No. 24

02.07.2024



Երևանում տրվեց Erasmus+ ծրագրի մեկնարկը

Երևանում տրվեց Erasmus+ ծրագրի շրջանակներում կյանքի կոչված Improvet_AM Capacity building նախագծի իրազեկման միջոցառման մեկնարկը, որի ընացքում ծրագրի պատասխանատուները ներկայացրին նախագծի նպատակները, ակնկալվող արդյունքները: Երևանում էին ծրագրի համակարգողներ ֆրանսիայի Լիոն քաղաքի SEPR/Ռոնի մասնագիտական ուսուցման կենտրոն/արհեստների կամպուսի և Apro Formazione ուսումնական կենտրոնի /Իտալիա, Ալբա/ ներկայացուցիչները: Միջոցառմանը մասնակցեցին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը, Հայաստանում ԵՄ պատվիրակության գործերի ժամանակավոր հավատարմատար Յան Պլեշինգերը Հայաստանում Էրազմուս+ ծրագրի ազգային գրասենյակի համակարգող Լանա Կառլովան, ՄԿՈՒ և շահագրգիռ այլ ոլորտների ներկայացուցիչներ: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը ողջունեց ներկաներին և կարեվորեց ծրագրի ներդրումը ՄԿՈՒ ոլորտում՝ այն որակելով որպես կարողությունների զարգացման լավագույն ճանապարհ:



էրազմուսյան հանդիպումները շարունակվեցին

Erasmus+ Improvet_AM ծրագրի շրջանակներում ֆրանսիացի, իտալացի և հայ գործընկերները այցելեցին Hovakimyan Lab, Avanta Clinics, SZ pharma ատամնատեխնիկական լաբորատորիաներ, ԱՄՀՆ Հաղթանակ շուրջօրյա խնամքի կենտրոն, ունեցան ֆոկուս-խմբային հանդիպումներ և արդյունավետ քննարկումներ:



Մարտի 20-21-ին այցելեցին Գյումրի, շրջայց կատարեցին Գյումրու պետական բժշկական քոլեջում, իրականացրեցին ճանաչողական այցեր ատամնատեխնիկական լաբորատորիաներում, խնամքի կենտրոններում: Նշենք, որ կարողությունների զարգացման ծրագիրն իրականացվում է Ատամնատեխնիկական գործ մասնագիտության մեջ թվային գործիքների, տարեցների խնամքի կենտրոններում անձնական խնամողի մասնագիտության ներդրման և մասնագիտական կողմնորոշման ուղղություններով:

Արժեքավոր գիտելիքներ Իտալիայից Հայաստան

Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի տնօրեն Գոհար Գրիգորյանը 2024 թվականի մայիսի 13-17-ը Իտալիայի Ալբա քաղաքի APRO Formazione ուսումնական կենտրոնում էր: Erasmus+ IMPROVET_AM ծրագրի շրջանակներում իրականացվելիք հանդիպումների ընթացքում քննարկեցին ինչպես ուսանողների մասնագիտական կողմնորոշման, այնպես էլ սոցիալ-առողջապահական ոլորտին վերաբերող հարցեր: Վերդունո հիվանդանոց,





Տաղանդների քաղաք, Cillario ուսումնական կենտրոն և Emmaüs սոցիալական կոոպերատիվ շրջայցը բացառիկ հնարավորություն էր Իտալիայի փորձը Հայաստան բերելու համար: Ծրագիրը ներառում էր նաև հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման, մեծահասակների մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ քննարկումներ, ինչպես նաև ծանոթացում APRO Formazione-ի իրականացրած ծրագրերին և ֆինանսավորման ռազմավարությանը:

Համատեղում ենք ջանքերը ՄԿՈՒ ոլորտում գերազանցության հասնելու համար

Այիսի 21-23-ը տեղի ունեցավ Եվրոպական կրթական հիմնադրամի (ETF) ՄԿՈՒ որակի ապահովման ֆորումը, որի օրակարգում էին հարցեր, թե ինչպե՞ս են ուսանողները քոլեջում մասնագետ դառնում, ինչպե՞ս են գնահատման միջոցով ձևավորվում մասնագիտական կարողություններն ու հմտությունները և որքանո՞վ է գործատուն ներգրավված այդ գործընթացում: Աշխատանքին միտված ձևավորող գնահատման որակի ապահովում միջոցառման շրջանակներում Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնը պատիվ ունեցավ հյուրընկալել ETF-ի փորձագետներին և ՈԱԱԿ ներկայացուցիչներին: Ձևավորող գնահատումը և գործատուների դերը ուսանողների հմտությունների ձևավորման



հարցում ուսումնասիրելու նպատակով փորձագետները մասնագիտական քննարկումներ ունեցան ուսանողների, դասախոսների, գործատուների, քոլեջների տնօրենների և փոխտնօրենների հետ:



ՍԵՊՖԱ-ն առաջատարների քառյակում է

Ձատիկ Խոհարարական խըճանկար թիմը, կազմված խոհարար և հրուշակագործ մասնագիտությունների առաջին և երկրորդ կուրսի 14 ուսանողներից, մասնակցեց Շարունակական միջոցառումների մրցույթ 2024-ին: Շեշտը դրվեց ազգային խոհանոցի և մշակույթի վրա: Մարսելից ժամանած ACFOA ներկայացուցիչները, որոնց հետ ՍԵՊՖԱ-ն ունի համագործակցության հետագա քրքիր փորձ, իրենց գործուն մասնակցությունն ունեցան: Մրցույթի առաջին փուլում մեր խոհարարները փոքրիկ տեսահոլովակի միջոցով ներկայացրեցին Երևանն իր մշակութային և ազգային նկարագրով, այնուհետև տեսաշարի միջոցով ցույց տվեցին, թե ինչպես է անցկացվում Ձատկի տոնը: Ուսանողներն ու Ֆրանսիայից ժամանած հյուրերը իրենց ձեռքով պատրաստեցին զատկական ուտեստներ՝ սոխի կեղևով ձու ներկեցին, փլավ ու գաթա պատրաստեցին, կիսվեցին ժինգյալով հաց պատրաստելու փորձով: Բնության գրկում համտեսեցին ուտեստները, ինչին հետևեց ազգային խոհանոցը ներկայացնող խաղը, որն ուսանողներն իրենք էին պատրաստել: Չանտեսվեց նաև թափոնների և էներգախնայողության թեման: Մերոնք այս մրցույթում հայտնվեցին լավագույն քառյակում: Հաղթողի անունը կհայտարարվի առաջիկայում Հոլանդիայում EfVET-ի տարեկան համաժողովի ժամանակ:

Պատրաստվում ենք WorldSkills International 2024 մրցույթին

Դերձակ Ֆ-3 կուրսի ուսանողուհի Միրա Ներսիսյանը նույն մասնագիտության դասախոս, արտադրական ուսուցման վարպետ Քնարիկ Վարդանյանի հետ ապրիլին, իսկ հունիսին արդեն վարպետ Սոնա Ոսկա-



նյանի հետ մեկնեցին Ֆրանսիա WorldSkills international 2024 մրցույթին ընդառաջ նախապատրաստվելու և փորձի փոխանակման նպատակով: Լիոնի SEPR արհեստների կամպուսում մեկ շաբաթից ավել տևողությամբ աշխատանքները հետագայում մեծ փորձառություն կտան մեր ներկայացուցչին՝ մրցույթին պատրաստ ներկայանալու համար: Աշխատանքային շաբաթները SEPR-ում սկսելուց առաջ նրանք մշակութային այցեր կատարեցին, Լիոնում ՀՀ գլխավոր հյուպատոսությունն իր հարկի տակ հյուրընկալեց մեր, ինչպես նաև SEPR կամպուսի ներկայացուցիչներին: Հիշեցնենք, որ Միրա Ներսիսյանը ճանաչվել է WorldSkills Armenia-ի հաղթող Նորաձևության տեխնոլոգիա մասնագիտության գծով և 2024 թվականի սեպտեմբերի 10-15-ը Լիոնում մասնակցելու է WorldSkills International 2024 մրցույթին:



Մասնակցեցինք Հայաստանի երիտասարդ ուսանող խոհարար-2024 մրցույթին

Հայաստանի երիտասարդ ուսանող խոհարար-2024 մրցույթին մասնակցելու նպատակով Խոհարարական գործ մասնագիտության 2-րդ և 3-րդ կուրսերի ուսանողների միջև ՍԵՊՖԱ-ում անցկացվեց մրցույթ և ընտրվեցին լավագույնները: Իրենց հմտություններով աչքի ընկած 6 ուսանողներ հնարավորություն ունեցան մասնակցելու մրցույթի նախընտրական ներքոլեջային փուլին: Կենտրոն էին այցելել Հայաստանի Խոհարարների Ասոցիացիայի ներկայացուցիչներ, ովքեր մրցույթի կազմակերպիչներն են: Մրցակցությունը թեժ էր, պայքարը՝ համառ, հաղթանակը մեկն էր, որը տրվեց Միլենա Ադամյանին: Երևանի գինու օրեր փառատոնի շրջանակներում անցկացված եզրափակիչ մրցույթի ընթացքում Միլենա Ադամյանը մասնակցեց և զբաղեցրեց երկրորդ պատվավոր տեղը: Միլենային դեռ բազում մասնագիտական վերելքներ ու նվաճումներ են սպասվում:



Մասնակցեցինք Կրթություն և կարիերա Expo 2024-ին

Կրթության տարբեր ուղղությունների, աշխատաշուկայում առավել պահանջարկ ունեցող մասնագիտությունների վերաբերյալ դպրոցականներին և ուսանողներին համապարփակ տեղեկություն տրամադրելու համար արդեն 23-րդ անգամ կազմակերպվող ցուցահանդեսին մասնակցեց նաև ՍԵՊՖԱ-ն: Կրթություն և կարիերա EXPO 2024 ամենամյա միջազգային մասնագիտացված ցուցահանդեսում կրթության ոլորտն այցելուներին ներկայացված էր թեմատիկ բաժիններով, որոնցում ընդգրկված էին բուհեր, քոլեջներ, ուսումնական կենտրոններ և միջազգային դոնոր կազմակերպություններ: Յուրաքանչյուր հաստատություն ուներ իր առանձին տաղավարը: Երեք օրերի ընթացքում կենտրոնի տաղավարը դիմորդների և աշակերտների ուշադրության կենտրոնում էր. այցելուները պատշաճ տեղեկություն էին ստանում ընդունելության կարգի, մասնագիտությունների, ուսանողական կյանքի, զեղչային համակարգի և այլնի մասին: Պարզաբանվում էին ոչ միայն նրանց հուզող հարցերը, այլև ապահովվում էր դրական և հաճելի միջավայր: Այցելուներին էին ներկայացվում տեսահոլովակներ, տրվում էին ՍԵՊՖԱ-ի տարբերանշանով նոթատետրեր, տաղավարի ֆոտոկրպակում անմահացնում էին հիշարժան պահերը:



ՍԵՊՖԱ-ն՝ Career City Fest 2K24-ին

Կենտրոնը այս տարի ևս մասնակցեց Career City Fest ամենամյա միջոցառմանը, որը տարածաշրջանում առաջին և միակ կարիերայի քաղաքն է: Երկու օր շարունակ հնարավորություն տրվեց հազարավոր մարդկանց և հարյուրավոր ըն-

կերությունների ծանոթանալ միմյանց հետ, փոխանակվել գաղափարներով, ստեղծել նոր ու արժեքավոր համագործակցություններ և միասին հաճելի ժամանակ անցկացնել: Երեք խոշոր հարթակներից ՍԵՊՖԱ-ն ընդգրկված էր զարգացման գոտում, որտեղ ներառված էին տարբեր թեմատիկ սեմինարներ՝ սկսած SS ոլորտից, մինչև դիզայն, մարկետինգ, արվեստ: Տեղի ունեցան անմիջական ինտերակտիվ սեմինարներ և մասնակիցները հնարավորություն ունեցան տեղում փորձագետներին ուղղել իրենց հուզող հարցերն ու ստանալ դրանց պատասխանները:



Բաց դռների օր՝ Holiday Inn հյուրանոցում

Holiday Inn Express Yerevan հյուրանոցում բաց դռների օր էր: Կենտրոնի ուսանողները Կարիերայի պատասխանատու Անուշ Ստեփանյանի և արտադրական ուսուցման վարպետներ Ելենա Մարությանի ու Գայանե Սիմոնյանի ուղեկցությամբ այցելեցին հյուրանոց: Խոհարարական գործ մասնագիտության ուսանողները հնարավորություն ունեցան շրջայց կատարել հյուրանոցում, ծանոթանալ առկա թափուր հաստիքներին: Նման հանդիպումները ոչ միայն ճանաչողական բնույթ են կրում, այլև տալիս են ոլորտին առնչվող բազմաթիվ հարցերի պատասխաններ, հետագա համագործակցության մեծ հնարավորություններ:



Ֆրանկոֆոնիայի օրեր 2024

Հայաստանը ֆրանկոֆոն ընտանիքի հետ նշեց Ֆրանկոֆոնիայի միջազգային օրը: ՍԵՊՖԱ-ի ուսանողները ՀՀ ԱԳՆ-ի և ԿԳՄՍՆ-ի հրավերով Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը ներկա գտնվեցին օրվան նվիրված համերգին, որով ազդարարվեց Հայաստանում Ֆրանկոֆոնիայի երկամսյակի պաշտոնական մեկնարկը: Այս տարվա Ֆրանկոֆոնիայի երկամսյակը երկրի համար միանգամայն նոր ու պատասխանատու հանձնառությամբ էր հանդես գալիս՝ Ֆրանկոֆոնիայի 10-րդ միջազգային մարզամշակութային խաղերը 2027 թվականին Հայաստանում անցկացնելու մասին կարևորագույն որոշման համատեքստում: Այս տարվա



երկամսյակի ծրագրում բազմաթիվ միջոցառումներ նվիրված էին ֆրանսահայ շանսոնյե Շառլ Ազնավուրին, որի 100-ամյակն այս տարի նշվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համագործակցությամբ և ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Հռչակավոր մարդկանց ու կարևոր իրադարձությունների տարելիցների 2024-2025թթ. օրացույցում:

Վիլյորբանի քաղաքապետը ՍԵՊՖԱ-ում էր

Ֆրանսիայի Վիլյորբան քաղաքի քաղաքապետ պարոն Սեդրիկ Վան Ստիվենդալի գլխավորած պատվիրակությունը Հայաստանում էր: Այցի շրջանակում ՍԵՊՖԱ-ն ընդունեց ֆրանսիացի հյուրերին: Վերջիններս շրջայց կատարե-



ցին կենտրոնում, ծանոթացան ուսուցման պայմաններին: Սեդրիկ Վան Ստիվենդալի գլխավորած պատվիրակության այցը համընկավ մի գեղեցիկ միջոցառման հետ, որի նախաձեռնողը դերձակների թիմն էր: Ֆրանկոֆոնիայի երկամսյակի միջոցառումների շրջանակներում դերձակների թիմը նախաձեռնել և ստեղծել էր մի գեղեցիկ հավաքածու և այն անվանել Լիոնյան գարուն. մեր հյուրերի ներկայությամբ ուսանողները ներկայացրին իրենց ձեռքով կատարած աշխատանքները:

Արցախցի կանայք՝ ապագա խոհարարներ, հրուշակագործներ, դերձակներ ու վարսահարդարներ

ՍԵՊՖԱ-ում անցկացվեցին Ֆրանսիայի դեսպանատան և Կանանց աջակցման



կենտրոնի հետ համագործակցության շրջանակներում իրականացվող կարճաժամկետ դասընթացներ: Արցախից ժամանած 15 կանայք խոհարարության և հրուշակագործության 6 շաբաթյա դասընթաց անցան, սովորեցին պատրաստման ու թխման տեխնոլոգիաներ: Մեր վարպետներ Էմմա Քոչարյանն ու Արուսյակ Գրիգորյանը իրենց մասնագիտական ողջ կարողությունները ներդրեցին, որպեսզի կանայք սովորեն խոհարարության գաղտնիքները, որոնցից թերևս ամենակարևորը բարձր որակի, համի և արտաքին տեսքի համադրումն է: Իսկ ահա կարի լաբորատորիայում չէին լռում կարի մեքենաների ձայները.Կարի արտադրության վար-



պետ Քնարիկ Վարդանյանը Արցախից ժամանած մեկ այլ խմբի հետ կիսվեց կարի գաղտնիքներով՝ անընդհատ ոգևորելով սեփական օրինակով: Գոհար Փոլադյանն ու Մարինե Հովհաննիսյանը մեկ այլ խմբի կանանց փոխանցեցին վարսավիրական արվեստի հմտությունները:

Պանրի և գինու մատուցում

Խոհարարական գործ մասնագիտության Մ-3 կուրսի ուսանողները արտուսվարպետ Արուսյակ Գրիգորյանի գլխավորությամբ Սպասարկում մոդուլի շրջանակներում բաց դաս անցկացրեցին: Թեման՝ Պանրի և գինու մատուցում: Տեսասահիկների միջոցով ներկայաց-



վեցին գինու և պանրի տեսակները, մատուցման առանձնահատկությունները: Գործնական հատվածում ցուցադրեցին՝ ինչպես ճիշտ մատուցել, որ գինին պանրի որ տեսակի հետ համադրել, ինչպես առաջարկել և այլն: Ուսանողները չէին շրջանցել նաև թափոնների թեման՝ ստեղծելով գեղեցիկ հուշանվերներ գինու խցաններից:

Փարաջանովյան շունչ ՍԵՊՖԱ-ում

Տարին հոբելյանական էր կինոյի հանճար Սերգեյ Փարաջանովի համար: Վարպետին նվիրված հոբելյանական միջոցառումներն այս տարի բավականին շատ էին ոչ միայն ՀՀ տարածքում, այլ նաև արտերկրում, մասնավորապես Վրաստանում և Ֆրանսիայում: ՍԵՊՖԱ-ն ևս անմասն չմնաց. դերձակ Հ-2 կուրսի նախաձեռնությամբ կենտրոնում անցկացվեց մի յուրօրինակ միջոցառում, որի ընթացքում ներկայացվեց մեծ վարպետի արվեստն ու ստեղծագործական ուղին, կյանքի կարևոր դրվագները: Ներկայացվեցին վարպետի արխիվից որոշ նյութեր, որոնք ներառում էին արժեքավոր լուսանկարներ, նամակներ, բեմագրեր, ինքնագրեր, մամուլի նյութեր...Վերջում ուսանողները իրենց ձեռքի աշխատանքների մի յուրահատուկ ցուցադրությամբ ներկայացրին փարաջանովյան գույները:

Ուխ նոր նախագահի ընտրություն

ՍԵՊՖԱ-ում կայացավ Ուխ ընդլայնված նիստը, որի օրակարգում Ուխ նախագահի ընտրությունն էր: Քվեարկության արդյունքում ձայների մեծամասնությամբ Ուխ նախագահ ընտրվեց Հրուշակեղենի տեխնոլոգիա մասնագիտության ուսանողուհի Կատրին Թաթոսյանը: Ուխ փոխնախագահ ընտրվեց նույն մասնագի-



տության ուսանող Վահե Գրիգորյանը, իսկ քարտուղար՝ Կարի արտադրության տեխնոլոգիա մասնագիտության ուսանողուհի Միլենա Տեր-Կարապետյանը:

Իմ Ես-ը Սահյանի ստեղծագործություններում և Սահյանի աշխարհը իմ Ես-ի ընկալմամբ

Դասախոս Ամալիա Բաղյանի նախաձեռնությամբ ՍԵՊՖԱ-ում նշվեց Համո Սահյանի ծննդյան 110-ամյակը: Իմ Ես-ը Սահյանի ստեղծագործություններում և Սահյանի աշխարհը իմ Ես-ի ընկալմամբ խորագրով գրական-երաժշտական ցերեկույթի ընթացքում կենտրոնի ուսանողները և



դասավանդողները Սահյանի պոեզիայի քնարական մի փունջ ներկայացրին հայրենիքի, բնության և սիրո մասին: Ներկայացրին մարդերգությունը՝ զուգորդելով Սահյանի խոսքերով գրված գեղեցիկ երաժշտական համարներով:

Դասը վարում է գործատուն...

ՍԵՊՖԱ-ի Ատամնատեխնիկական գործ մասնագիտության 2-րդ կուրսի մասնագիտական գործնական դասընթացը վարում էր Հովակիմյան լաբ ատամնատեխնիկական լաբորատորիայի տնօրեն Սարգիս Հովակիմյանը: Վարպետաց դասի ընթացքում Ս. Հովակիմյանն ու ուսանողները միասին կատարեցին ատամնեղի մոդելավորում, ինչով ավելի ամրապնդեցին իրենց ունեցած գիտելիքները: Նշենք, որ դասընթացի ժամանակ կիրառված նյութերը տրամադրել էին գերմանական Renfert Dental ընկերությունը և SZ Pharma կազմակերպությունը:



ՍԵՊՖԱ-ի շրջանավարտները կարոտելու, հիշելու են

Եվս մեկ սերունդ ՍԵՊՖԱ-ն ճանապարհեց դեպի նոր կյանք: Արցունքներն ու ծիծաղը միախառնվել էին վերջին զանգի ղողանջներին, արթնացրել քոլեջյան քնած հուշեր: Կենտրոնի տնօրեն Գոհար Գրիգորյանը շնորհավորեց շրջանավարտներին, դասավանդողներին, ծնողներին, ուսումնառության այս կարևոր փուլը հաջողությամբ կերտողներին, ավարտին հասցընողներին: Նրանք արդեն ընտրել են իրենց ապագայի մասնագիտությունը: Հուսով ենք, որ ուսումնառության 3 տարիների ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները նրանց կդարձնեն մրցունակ արդի աշխատաշուկայում, կօգնեն լինել վարպետը գործի և երաշխիքը մեր հայրենիքի զարգացման:



Էրազմուս+ նախագծերի մեկնարկային օր-2024

Հունիսի 20-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարությունում տեղի ունեցավ Էրազմուս+ նախագծերի մեկնարկային օր - 2024 միջոցառումը: Միջոցառման նպատակն էր ներկայացնել Էրազմուս+ ծրագրի վերջին՝ 2023թ. մրցույթի արդյունքում դրամաշնորհ ստացած բուհերի և ՄԿՈՒ հաստատությունների կողմից իրականացվող նախագծերի հիմնական նպատակներն ու ակնկալվող արդյունքները: Միջոցառմանը որպես բանախոս հանդես եկավ նաև Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի տնօրեն Գոհար Գրիգորյանը: Հիշեցնենք, որ ՍԵՊՖԱ-ն ընդգրկված է Էրազմուս+ IMPROVET_AM ծրագրում:

